ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1964 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի հերթական գիտական նստաշրջանը նվիրված էր ՍՍՌՄ և ՀՍՍՌ գիտությունների ակադեմիաների իսկական անդամ, բազմավաստակ գիտնական, ականավոր հայագետ ու պատմաբան Հակոբ Մանանդյանի ծննդյան 90-ամյակին։

Պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Գ. Գալոյանի բացման խոսքից հետո ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Գ. Սարգսյանը։

—1897 թ.,—ասաց զեկուցողը,—ավարտելով Ենայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը (ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան), իսկ հետագայում Պետերբուրգի կայսերական համալսարանի արևելյան լեզուների, Տարտուի համալսարանի իրավաբանական ֆակուլտետները, զինվելով բազմակողմանի գիտելիքներով, Հ. Մանանդյանը արգասավոր աշխատանք է կատարում հայ բանասիրության բնագավառում։

Հայաստանի խորհրդայնացումից հետո Մանանդյանն ակտիվորեն մասնակցում է Երևանի պետական համալսարանի ստեղծմանը և դառնում նրա առաջին ռեկտորը, միաժամանակ ավանդելով հայ ժողովրդի պատմության դասընթացը։ Այդ տարիներին Մանանդյանն ուսումնասիրում է Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությունը։ 40-ական թվականներին անխոնջ գիտնականի միտքը կենտրոնանում է Հայաստանի քաղաքական պատմության պրոբլեմների վրա։ Նա հրատարակում է Տիգրան Երկրորդի ժամանակաշրջանին նվիրված իր հիանալի մենագրությունը։ Դրանից հետո՝ ձեռնամուխ է լինում «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր աշխատության ստեղծմանը։ Մանանդյանը կարևոր ուսումնասիրություններ է կատարել նաև պատմական աշխարհագրության, Հայաստանի առևտրական ու ռազմական ճանապարհների, պատմական չափագրության ու դրամագիտության ասպարեզներում։ Դրանք հիմք են դարձել հայ ժողովրդի պատմական կյանքի այս կամ այն պրոբլեմներին նվիրված աշխատությունների համար։

—Պատմա-բանասիրական իր հոյակապ պատրաստությամբ,—ասում է զեկուցողը,—փայլուն էրուդիցիայով, Մանանդյանը հայոց պատմությունից զատ, ընդգրկում էր նաև սահմանամերձ երկրների, անտիկ աշխարհի, Արևմտյան Եվրոպայի, Ռուսաստանի պատմության խնդիրները։ Բազմաթիվ հին ու նոր լեզուների իր իմացությամբ, հետազոտողի իր բացառիկ ձիրքով նա դասվում է սովետական պատմաբանների լավագույն ներկայացուցիչների շարքին։

Ուշագրավ և նորահայտ փաստերով հարուստ էր ակադեմիկոս Ս. Երեմյանի զեկուցումը՝ «Նաքշի-Ռուստեմի եռալեզու արձանագրության վկայությունները Հայաստանի մասին» թեմայով։

Այդ արձանագրությունը հայտնաբերվել է 1930-ական թվականներին Պերսեպոլսից հյուսիս, Նաքշի-Ռուստեմի ժայռի մոտ գտնվող մի շինության պատերի վրա, որը գիտությանը հայտնի է Res gestae divi saporis *անունով։ Այն գրված է պարսկերեն, պահլավերեն ու հունարեն և հաղորդում է Պարսից արքա Շապուհ Ա-ի (241—272) թագավորության ժամանակ տեղի ունեցած նշանավոր անցքերի մասին։*

—Երրորդ դարը,—ասում է ակադեմիկոս Ս. Երեմյանը,—Հայաստանի պատմության ամենամութ շրջաններից մեկն է։ Մենք այդ ժամանակաշրջանի մասին չունենք այնօրյա աղբյուրներ, իսկ հետագա աղբյուրների տեղեկությունները շատ համառոտ են, խառնաշփոթ և մասամբ էլ՝ միտումնավոր։ Այդ բացը մեծապես լրացնում է Շապուհի արձանագրությունը, որի պարունակած տեղեկությունները ապացուցում են պատմահայր Մ. Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի 71—79-րդ գլուխներում բովանդակած հիմնական փաստերի պատմականությունը։ Խորենացու պատմության հիշյալ գլուխները նվիրված են երրորդ դարի պատմական դեպքերի նկարագրությանը, երբ Մեծ Հայքի գահի վրա իբրև ժառանգական գահակալներ նոր էին հաստատվել հայ Արշակունիները։

Զեկուցողը նշում է, որ, ելնելով սույն արձանագրության տվյալներից, անհրաժեշտ է վերանայել Հ. Մանանդյանի այն եզրակացությունը, թե Հայաստանը սասանյան Պարսկաստանի

կողմից նվաճված չի եղել ոչ Փիլիպոս Արաբացու և ոչ էլ նրա հաջորդի՝ Դեկոսի ժամանակ։ Շապուհի արձանագրության տեղեկությունները ցույց են տալիս, որ հռոմեական կայսրության և սասանյան Իրանի միջև ստեղծված պայմաններում անկարելի էր, որ Հայաստանն անկախ մնար, նա երկար չէր կարող դիմադրել և 251—252 թթ. ենթարկվել է սասանյան Իրանին։ Խոսելով Շապուհ առաջինի կողմից Հայաստանի թագավոր նշանակված ոմն Արտավազդի վերաբերյալ արձանագրության տվյալների մասին, ակադեմիկոս Ս. Երեմյանը գտնում է, որ ճիշտ պետք է համարել Ղ. Ալիշանի այն ենթադրությունը, որ սա Մ. Խորենացու հիշատակած Արտավազդ Մանդակունին պետք է լինի։

17-րդ դարի հայ վաճառականի նորահայտ հաշվեմատյանի մասին հետաքրքիր հաղորդումով հանդես եկավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր Լ. Խաչիկյանը։

—Հնագույն ժամանակներից,—ասաց նա,—հայ խոջայական միջավայրում ձևավորված վաճառականական կարգերն ու հարաբերությունները, որ սերնդե-սերունդ հարատևելով գրի են առնվել և օրենքի ուժ ստացել 1765 թ. Աստրախանում, հնարավորություն են տալիս մոտիկից ծանոթանալու դրամատու խոջայի և դրամառու գործակատարի փոխադարձ պարտավորություններին։ Այդ պարտավորությունները ձևակերպվել են, ի նկատի ունենալով դրամատեր մեծատունների տնտեսական ու դասային շահերը։ Ուրիշների դրամով գործող և «ընկեր» կոչվող վաճառականները հանդիսացել են խոջաների կամքը կատարող գործակատարները միայն։ Այդպիսի գործակատարներից մեկն է եղել նաև Տեր Դավթի որդի Հովհաննես Ջուղայեցին, որը 1682 թ. մի համաձայնագիր է ստորագրել երկու վաճառական եղբայրների հետ և նրանց դրամագլխով մտնելով առևտրի ասպարեզ, մեկնել է Հնդկաստան։

Համաձայնագիրը ստորագրելու օրվանից ի վեր, շուրջ 11 տարի, Հովհաննեսը մանրամասն շարադրել է իր առևտրական գործունեությունը և տվել առանձին ապրանքների առուծախին վերաբերող տվյալներ։ Այդ արժեքավոր հաշվեմատյանը հասել է մինչև մեր օրերը և գտնվում է Պորտուգալիայում՝ Լիսաբոնի ազգային գրադարանում։ Հաշվեմատյանի գրառումները կատարված են հստակ և գրագետ, հաշվապահական կայուն սկզբունքներով, առանձին սյունակներում հոդված առ հոդված տրված են ելքի և մուտքի հաշիվները։

Անդրադառնալով Հովհաննեսի երթուղուն և անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով նրա կատարած առուծախի հիմնական գործարքների մասին, Լ. Խաչիկյանը առանձնապես անդրադարձավ Հովհաննես Ջուղայեցու՝ Նեպալ և Տիբեթ կատարած ճամփորդությանը, նշելով, որ նա արևելագիտության մեջ ներկայումս հայտնի երրորդ օտարազգի անձնավորությունն է, որ մուտք է գործել Տիբեթ և գրավոր փաստաթուղթ թողել այդ մասին։ Նախորդ երկուսի տված տեղեկությունները շատ համառոտ են, մասամբ կասկածելի ու շինծու, մինչդեռ Հովհաննեսի գրառումները ստույգ են և արժանահավատ։ Նա Տիբեթի մայրաքաղաք Լհասայում բնակվել է շուրջ 5 տարի, գործ է ունեցել տասնյակ պետական պաշտոնյաների, բուդայական հոգևորականության ներկայացուցիչների, վաճառականների և այլ անձանց հետ, սովորել է տեղական լեզուն, ժողովրդի կենցաղն ու բարքերը և այդ ամենի մասին գրանցել իր հաշվեմատյանում։ Այս առումով նա չունի իր նախորդը, ինչպես և՝ ժամանակակից հաջորդը։

Վերջում ընդգծելով հաշվեմատյանի նշանակությունը, զեկուցողը նշեց, որ այդ մատյանը նոր լույս է սփռում Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի տնտեսական կյանքի պատմության չուսումնասիրված ու մութ շատ բնագավառների վրա։

Զեկուցումներից հետո Հ. Մանանդյանի մասին հետաքրքրական հուշերով հանդես եկան ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը[1], Հ. Մանանդյանի աշակերտներ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը և Լ. Խաչիկյանը, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը։

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

---

1 Ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանի խոսքը տպագրվում է «Տեղեկագրի» այս համարում։